ՀՏԴ՝ 891.981.09+75(479.25)
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-105

«ԼՈՒՍԱԲԱՑ» ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ*

1921 թ. Թիֆլիսում հիմնադրված Հայ արվեստի տուն գրական մշակութային հասարակական կազմակերպությունը՝ «Հայարտունը», գոյատևեց մինչև 1930-ականները և այդ տարիներին բավական ակտիվ գործունեություն ծավալեց: 1926 թ. Հայարտան գրական բաժանմունքը և պրոլետգրողների ասոցիացիան ստեղծեցին Հայ գրողների միությունը, որն էլ հիմք դրեց «Լուսաբաց» գրական-գեղարվեստական ժողովածուին՝ որպես իր անդամների և ընդհանրապես պրոլետարական գրողների հարթակ: «Լուսաբացը» ունեցավ հինգ համար՝ տպագրվելով 1927-1930 թվականներին: Այն ուներ գրական, նկարչական և երաժշտական բաժիններ: Գրական բաժինն ամենածավալունն է և միակը, որ առկա է բոլոր համարներում: Ժողովածուի նկարչական բաժնում ներկայացված արվեստագետների մեծ մասը թիֆլիսահայ լավագույն նկարիչներից են, ոմանք «Հայարտունի» անդամներ են: Ժողովածուի էջերում հայտնված նկարներից շատերն իրենց թեմատիկայով մոտ են Խորհրդային Միության գաղափարախոսությանը՝ ներկայացնելով աշխատավոր բանվոր դասակարգ, արդյունաբերական քաղաք, անգրագիտության վերացում և այլն: «Լուսաբաց» գեղարվեստական-գրական ժողովածուն հետաքրքիր է դիտարկել թիֆլիսահայ մշակույթի համատեքստում:

Բանալի բառեր՝ «Լուսաբաց», գրական-գեղարվեստական ժողովածու, թիֆլիսահայ նկարիչ, խորհրդային գաղափարախոսություն:

Ներածություն

Սույն հոդվածն անդրադառնում է 1927-1930 թթ. Թիֆլիսում հրատարակված «Լուսաբաց» գրական-գեղարվեստական ժողովածուին՝ մասնավորապես կանգ առնելով վերջինիս նկարչական բաժնի

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի նկարիչների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, mane.mkrtchyan@gmail.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

վրա և նպատակ ունենալով դիտարկել ժողովածուի մոտեցումներն ու նպատակները տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր համատեքստում:

Թիֆլիսը ժամանակին՝ մինչև Հայաստանի խորհրդայնացումը, եղել է հայ մտավորականության կենտրոն և թե՛ գրական, թե՛ մշակութային գործունեության համար նպաստավոր հանգրվան: Եվ թերևս միանգամայն օրինաչափ էր, որ հենց Թիֆլիսում են հիմնվել «Վերնատունը» և «Հայ գրողների կովկասյան ընկերությունը»: Եվ իհարկե բնական էր, որ այդ ժամանակահատվածում այնտեղ հրատարակվել են նաև հայալեզու թերթեր, ամսագրեր ու ժողովածուներ, որոնք յուրովի արտացոլումն էին ժամանակի հայ գրական ու մշակութային մտքի զարգացումների: Այդպիսին էին, օրինակ, նշանավոր «Մեղու Հայաստանի» (1858-1886 թթ.) և «Մշակ» (1872-1921 թթ.) թերթերը:

1921 թ. փետրվարին Թիֆլիսում հիմնադրվում է Հայ գրչի մշակների միությունը: Նույն թվականի մարտ ամսին հիմնադրվում է «Հայարտունը»՝ Հայ արվեստի տուն գրական մշակութային հասարակական կազմակերպությունը: Վերջինիս հիմքը դրվել էր Երևանում նույն թվականի հունվարին, բայց այստեղ միայն մի քանի ամսվա գործունեություն էր ծավալել: Թիֆլիսի Հայարտունը կրում էր Վահան Տերյանի անունը, նախագահն էր Հովհաննես Թումանյանը: Այն գոյատևեց մինչև 1930-ականների կեսերը: Հայարտունն ուներ մի քանի բաժին՝ գրական բաժինը ղեկավարում էր Հովհաննես Թումանյանը, ապա՝ Դերենիկ Դեմիրճյանը, Ս. Խանոյանը, Աղ. Վարդանյանը: Երաժշտական բաժնի ղեկավարն էր Ռոմանոս Մելիքյանը: Գրիգոր Շարբաբչյանը գլխավորում էր նկարչական բաժինը, Ստեփան Քափանակյանը՝ թատերական բաժինը, իսկ թատերական ստուդիան ղեկավարում էր Արշակ Բուրջալյանը:

Հիմնական նյութի շարադրանք

1926 թ. Հայարտան գրական բաժանմունքը և պրոլետգրողների ասոցիացիան ստեղծում են Հայ գրողների միությունը: Վերջինս 1927 թվականին հիմնում է «Լուսաբաց» գրական-գեղարվեստական ժողովածուն: Ժողովածուի առաջին համարում տեղ գտած խմբագրական խորհրդի ներածականում նշվում է. «Թիֆլիսում հիմնված (Հայարտան կից) Հայ Գրողների Միությունը (Ֆեդերացիան), որն ընդգրկում է պրոլետարիական և «ուղեկից» գրողներին, արդեն մի տարուց ավելի է, ինչ

անցել է գործի և օրեցօր ընդլայնում է իր գործունեությունը: Եվ ահա ներքին գրական-լաբորատորիական աշխատանքներից հետո Միությունը անցնում է հրատարակության և ընթերցող հասարակության առաջարկում է այս ժողովածուն: Այս հրատարակությամբ Գրողների Միությունը (Ֆեդերացիան) նպատակ է դնում իրեն մի կողմից՝ հանդես բերել իր անդամների գրական աշխատանքները և մյուս կողմից՝ բավարարել ընթերցող հասարակության ակնհայտ պահանջը, որն աճում է օրեցօր և դառնում հրամայական»[1]: Ասել է թե ի սկզբանե դրվել են ձևակերպված խնդիրներ և նպատակներ, ինչպես օրինակ՝ «Հայարտանը» կից Հայ գրողների միության անդամների ստեղծագործությունների հրատարակումը, պրոլետարական գրողներին հարթակ տրամադրելը, խորհրդային ոգուն ապավինելը:

Ժողովածուն գոյատևեց միայն 1927-1930 թթ. և ունեցավ հինգ համար: «Լուսաբաց» ժողովածուն ուներ գրական, նկարչական և երաժշտական բաժիններ: Անդրանիկ համարում տեղ էին գտել միայն գրական ստեղծագործություններ, իսկ հաջորդ համարների շրջանակն ընդլայնվեց, հայտնվեցին գեղարվեստական և երաժշտական բաժինները: Ժողովածուի բոլոր համարները գրեթե հավասար ծավալ ունեն՝ մոտ 170 տեքստային էջ ու նկարչական և երաժշտական հավելվածներ, բացառությամբ առաջինի՝ մոտ 140 էջ: Ժողովածուի ընդհանուր պատկերն առավել հստակ ուրվագծելու համար հակիրճ անդրադառնանք նաև գրական և երաժշտական բաժիններին:

Գրական բաժինը «Լուսաբացի» առաջատարն էր: Առաջին իսկ համարից ընդգծվում է հեղինակների այն հիմնական շարքը, որ հանդիպում ենք ժողովածուի հետագա համարներում՝ Արազի, Վեսպեր, Ծերուն Թորգոմյան, Մարգար, Գևորգ Գրիգ, Հռիփսիմե Պողոսյան, Գ. Մելոյան: Ժողովածուի համարներում հրատարակվում են նաև Հակոբ Հակոբյանի, Գուրգեն Մահարու, Նար-Դոսի, Շիրվանզադեի ստեղծագործությունները: Ժողովածուն բացվում է Հակոբ Հակոբյանի (1866-1937) «Քնթեռ-հորսը (Ագիտատորի հուշերից)» հուշագրային ստեղծագործությամբ: Ժողովածուի բացման հեղինակի ընտրությունը բնավ էլ պատահական չէր: Հակոբ Հակոբյանը ի սկզբանե հեղա-

[1] «Լուսաբաց» գրական-գեղարվեստական ժողովածու, համար 1, Թիֆլիս, 1927, էջ 3:

փոխությանը հարող իր հայացքներով հայ գրականության պատմություն մտավ իբրև հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր: Թերևս նույն սկզբունքով «Լուսաբացի» գրական մասում մշտական տեղ ունեցավ Արազին (Մովսես Հարությունյան, 1878-1964), որը հայացքներով և գրականությամբ համապատասխանում էր պրոլետարական գրողների միտումներին: Եթե ամփոփելու լինենք «Լուսաբացի» էջերում տեղադրված գրական ստեղծագործությունները, հստակ է մի բան. հեղինակներն ու նյութերն ընտրված էին խիստ որոշակի գաղափարախոսությամբ՝ խորհրդային կարգերին հավատարիմ:

Երաժշտական բաժինը «Լուսաբաց» ժողովածուի համեմատաբար փոքր հատվածն է, երաժշտական նյութեր կան միայն երրորդ և չորրորդ համարներում: Մենք այստեղ տեսնում ենք Կարո Զաքարյանի, Վարդգես Տալյանի, Արմեն Տիգրանյանի, Ազատ Մանուկյանի ստեղծագործությունները: Այս հատվածը քննելով՝ նկատում ենք, որ «Լուսաբաց»-ին բնորոշ է հեղինակային ընտրությունը, այսինքն՝ ընդգրկվել են այնպիսի հեղինակներ, որոնք իրենց գործունեությամբ կապված էին Թիֆլիսի հետ և դարձյալ հավատարիմ էին տվյալ ժամանակահատվածի ոգուն:

«Լուսաբաց» ժողովածուի **նկարչական բաժինը** բավական հետաքրքիր է: Առհասարակ թիֆլիսահայ նկարիչների ստեղծագործություններն ունեն բավական յուրահատուկ, խիստ բնութագրական ոճ, ուրույն ձեռագիր, և «Լուսաբացում» հանդիպում ենք թիֆլիսահայ լավագույն նկարիչների աշխատանքներին: Այստեղ ևս, փաստորեն, սկզբունքին հավատարիմ, ժողովածուն ունի նախընտրելի հեղինակների խումբ:

Երկրորդ ժողովածուի նկարչական բաժինը բացվում է Նար-Դոսի դիմանկարով, որի հեղինակը թիֆլիսահայ հանրաճանաչ նկարիչ Հովսեփ Կարալյանն է:

Հովսեփ Կարալյանը (Իոսիֆ Կարալով, ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ) ծնվել է 1897 թ. Թիֆլիսում, սովորել է Թիֆլիսի արական գիմնազիայում և Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության գեղանկարչության և քանդակագործության դպրոցում: Կարալյանի հետ նույն դպրոցում են սովորել նաև Երվանդ Քոչարը, Գրիգոր Շարբաբչյանը, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը: Կարալյանին դասավան-

դել է նաև մեծանուն արվեստագետ Եղիշե Թադևոսյանը: Արդեն 1917-ից Հ. Կարալյանը սկսում է մասնակցել ցուցահանդեսների: Նա ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, 1953-ին հաստատվել է Երևանում: Անդամակցում է Թիֆլիսում Հայաստանի նկարիչների միությանը և 1925 թ. ընդունվում «Հայարտուն»: 1927 թ. նա ուսումը շարունակում է Մոսկվայի Սիդամոն-Էրիսթավու վճարովի ստուդիայում, ապա 1936 թ. ընդունվում է Մոսկվայի բարձրագույն գեղարվեստատեխնիկական ինստիտուտի գրաֆիկայի բաժինը: Հ. Կարալյանի ստեղծագործությունը բազմակողմ է, ուրույն գեղանկարչական ձեռագրով: Նա զբաղվում էր նաև բեմանկարչությամբ, գրքային նկարազարդումներով, պլակատային արվեստով, Մոսկվայի հայկական պետական դրամատիկական ստուդիայում ձևավորել է Գ. Սունդուկյանի «Քանդած օջախը» (1935, ռեժ.՝ Ռ. Սիմոնով): «Նրա արվեստը գեղեցիկ է նաև նրանով, որ այնտեղ ինչ-որ տեսնում ենք, իրենն է միայն: Այդ «իրենը» նրա արվեստին բերում է անհատականություն, բարձրացնում նրա գեղարվեստական արժեքը: Գույների յուրահատուկ արտահայտչականություն, կոմպոզիցիաների կարալյանական մտահղացում, գծի սեփական ըմբռնում: Ահա այն միջոցները, որով կենդանություն է առել նրա ներաշխարհը, դիտողի տեսաշխարհը»[2]: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում, Մոսկվայում, Նովոսիբիրսկում:

Նար-Դոսի դիմանկարը թվագրված է 1927 թվական, գրաֆիկական աշխատանք է, որտեղ նկարիչը զուսպ արտահայտչամիջոցներով կերտել է արդեն հասուն տարիքի գրողի և մտավորականի արտահայտիչ կերպարը:

«Լուսաբաց» ժողովածուի չորրորդ համարում տեղադրված է Հովսեփ Կարալյանի «Անգրագիտության վերացում» վերնագրված գործը, որտեղ գիրք կարդացող աշխատավոր կին է, այսինքն՝ նկարն իր թեմատիկայով արդեն իսկ համապատասխանում էր Խորհրդային Միությունում պրոպագանդվող գաղափարախոսությանը:

Ի դեպ, «Լուսաբացի» շապիկի նկարի հեղինակը ևս Կարալյանն էր:

---

[2] **Ավետիսյան Մ., Խաչատրյան Շ.**, Վերհուշի նկարիչը, «Սովետական արվեստ», 1967, N 8, էջ 25:

«Լուսաբացի» երկրորդ համարում տեղ գտած նկարը Գրիգոր Շարբաբչյանի «Քյամանչիի երգն» է, որը Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում նշված է «Սայաթ-Նովա»: Գրիգոր (Գիգո) Շարբաբչյանը ծնվել է 1884 թ. Թիֆլիսում: 1904-1910 թթ. սովորել է Փարիզի հեղինակավոր Ժուլիանի ակադեմիայում: Շարբաբչյանը դասավանդել է «Հայարտունի» արվեստի ստուդիայում: Թիֆլիսի հայկական թատրոնում ձևավորել է Շանթի «Հին աստվածները» (1913): 1921-ից Թիֆլիսի հայկական դրամատիկական թատրոնի գլխավոր նկարիչն էր: Նրա ստեղծագործական կենսագրությունը կապված է թե՛ գեղանկարչության և գրաֆիկայի, թե՛ բեմանկարչության հետ: Ձևավորել է բազմաթիվ ներկայացումներ, ինչպես՝ Շեքսպիրի «Օթելլո», «Համլետ», Գորկու «Հատակում», Լերմոնտովի «Դիմակահանդես», Չարենցի «Կապկազ թամաշա», Սունդուկյանի «Պեպո», «Քանդած օջախ», «Խաթաբալա», ինչպես նաև Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի առաջին «Պեպո» բեմադրությունը 1922 թվին, 1932 թվականին՝ Վրաստանի Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի թատրոնում՝ Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան, 1927 թ. Կազմակերպվել է նրա անհատական ցուցահանդեսը: Ինչ վերաբերում է հաստոցային նկարչությանը, ապա Շարբաբչյանի գեղանկարներում առանցքային են նաև Թիֆլիսի քաղաքային և կենցաղային տեսարանները: «Լուսաբացի» երրորդ համարում տեսնում ենք Շարբաբչյանի ստեղծագործությունների վերատպությունները՝ երկու աշխատանք «Զանգեզուրի տեսարաններից» շարքից: Այստեղ հարկ է նշել նաև, որ այս շարքի ստեղծագործություններից՝ հինգ ջրաներկ և մեկ մատիտանկար, 1928 թ. ձեռք էր բերել Հայաստանի պետական թանգարանի Գեղարվեստական բաժինը[3] (ներկայիս՝ Հայաստանի ազգային պատկերասրահ): Ժողովածուի չորրորդ համարում նկարչի «Գորգագործություն» աշխատանքն է:

«Լուսաբացի» երկրորդ համարի գեղարվեստական բաժնում Գևորգ Գրիգորյանի՝ Ջոտտոյի գործն է: Նա ծնվել էր Թիֆլիսում 1897 թ.: 1916-1920 թվականներին սովորել է Թիֆլիսի Գեղարվեստը

[3] Տե՛ս Նոր ձեռք բերված իրերի ցուցահանդես (Հայաստանի պետական թանգարան, Գեղարվեստական բաժին, ստեղծագործությունների ցանկ), Երևան, 1928, էջ 8:

խրախուսող կովկասյան ընկերության նկարչության և քանդակագործության դպրոցում՝ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի և Երվանդ Քոչարի հետ, Եղիշե Թադևոսյանի ղեկավարությամբ: 1921 թվականին Սուրեն Խաչատրյանի (Արամ Խաչատրյանի եղբայրը) գլխավորությամբ երիտասարդ դերասանների խմբի հետ մեկնել է Մոսկվա և 1921-1923 թվականներին ուսանել Մոսկվայի Բարձրագույն գեղարվեստատեխնիկական արվեստանոցներում, որտեղ դասավանդել են Լ. Պոպովան, Ա. Վեսնինը: Այստեղ էլ Ջոտտոն անդամագրվել է «Հայարտուն» միությանը: 1920-ականների վերջը և 1930-ականների սկիզբը նկարչի ստեղծագործական վերելքի տարիներն են, երբ նա մասնակցում էր Թիֆլիսի մշակութային կյանքին, հայ և վրացի նկարիչների ցուցահանդեսներին: 1962-ից հաստատվել է Երևանում: Նրա ստեղծագործություններից «Ստեփան Շահումյան», «Հովհարով կինը», «Ռեքվիեմ. Առաջնորդի մահը», «Մանուշակի դիմանկարը», «Նատյուրմորտ» կտավներն այդ տարիների արդյունք են: Ապա նկարչի համար մեկուսացման երկու տասնամյակ ձգվող տարիներ էին, որոնց ընթացքում սակայն նկարիչը շարունակում է ստեղծագործել: Եվ այդ շրջանի նկարները՝ «Մայրություն», «Գեղջկուհին երեխայի հետ», «Հավլաբարցի կինը», արտացոլումն են դրամատիկ տրամադրությունների: Սակայն հետագայում՝ 1950-ական թվականներին, Արևմուտքի գեղարվեստական ուղղություններին հետևելու մեջ մեղադրվող նկարչի արվեստը ընկալվում և գնահատվում է այլ կերպ:

«Լուսաբացի» երկրորդ համարում տեսնում ենք «Ղեկավարի դագաղի մոտ» վերնագրված (հետագայում՝ «Ռեքվիեմ. Առաջնորդի մահը») կտավի վերատպությունը, իսկ երրորդ համարում՝ «Հրաժեշտ» նկարը:

«Լուսաբացի» չորրորդ համարում արդեն առավել ցայտուն է խորհրդային գաղափարախոսության կնիքը. երևում են Դ. Լորիս-Մելիքյանի «Արհեստանոց», Հ. Կարալյանի «Անգրագիտության վերացում», Մ. Մարգարյանի «Քաղաքը» գործերի վերատպությունները: Նույն սկզբունքը գործում է նաև ժողովածուի հինգերորդ համարի պարագայում, որը ներկայանում է Գաբրիել Գյուրջյանի «Երևանը» նկարով:

Գաբրիել Գյուրջյանը (1892 թ., Արդվին – 1987 թ., Երևան, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ) սովորել է Պենզայի Գեղարվեստական բարձրագույն գեղարվեստական արվեստանոցներում (ավարտել է 1920-ին), մասնակցել է ռուս առաջադեմ նկարիչների՝ «Բելի մեդվեդ», «Վոլժսկի սոյուզ» խմբակցությունների ցուցահանդեսներին: 1922-ից բնակություն է հաստատել Երևանում, որտեղ և ծավալել է բավական ակտիվ ստեղծագործական, մանկավարժական, գիտական գործունեություն: Եղել է 1926-ին Երևանում կազմակերպված «Հեղափոխական Ռուսաստանի նկարիչների ասոցիացիայի» նախագահ: Նա նաև հոդվածների, գրքերի, արվեստագիտական ուսումնասիրությունների հեղինակ է, դասավանդել է Պոլիտեխնիկական և Գեղարվեստաթատերական ինստիտուտներում: Գ. Գյուրջյանը ստեղծել է արդյունաբերական բնանկարներ և գյուղի աշխատանքին նվիրված մեծակտավ գործեր:

«Լուսաբաց»-ի վերջին՝ հինգերորդ համարում տեսնում ենք նաև քանդակագործներ Այծեմնիկ Ուրարտուի (ժողովածուում՝ Ուրարտու Քոչարյան) հեղինակած Ստեփան Շահումյանի հուշարձանի նախագիծը և Ստեփան Թարյանի «Քարտաշ» քանդակի նկարը, ինչպես նաև Մարտիրոս Սարյանի «Հայաստանի սարերը» կտավը («Լեռներ», պահվում է Տրետյակովյան պատկերասրահում):

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք նշել, որ «Լուսաբաց» ժողովածուի նկարչական բաժնում տեղ գտած արվեստագետների մի մասը (Կարալյան, Շարբաբչյան) անդամակցում էր և ակտիվ մասնակցություն ուներ Թիֆլիսի «Հայարտունի» գործունեությանը: Ժողովածուում տեղ գտած նկարներից շատերն անդրադառնում էին Խորհրդային Միությունում քարոզվող թեմատիկային՝ աշխատավոր բանվոր դասակարգ, արդյունաբերական քաղաք, անգրագիտության վերացում և այլն: Ակնհայտ պրոպագանդիստական ուղղվածությունը հատկապես բնորոշ է «Լուսաբացի» վերջին՝ հինգերորդ, համարին, ինչը միանգամայն ընկալելի է՝ հաշվի առնելով, որ այս համարը նվիրված էր Հայաստանի խորհրդայնացման տասնամյակին: Չնայած այն հանգամանքին, որ «Լուսաբաց» գրական-գեղարվեստական ժողովածուն երկարատև գործունեություն չունեցավ, այն արժանահիշատակ է, քանի որ պատկերա-

ցում է տալիս տվյալ ժամանակաշրջանի թիֆլիսահայ գեղարվեստական կյանքի մասին:

РАЗДЕЛ ЖИВОПИСИ ЛИТЕРАТУРНО-ХУДОЖЕСТВЕННОГО СБОРНИКА “ЛУСАБАЦ”

МАНЭ МКРТЧЯН

В 1921 году в Тифлисе была учреждена литературно-культурная общественная организация Дом армянского искусства «Айартун». Организация действовала довольно активно и просуществовала до 1930-х годов. В 1926 году Литературный отдел “Айартуна” и Ассоциация пролетарских писателей основали Союз армянских писателей, положивший начало литературно-художественному сборнику “Лусабац” (“Рассвет”) как платформе для членов Союза и пролетарских писателей в целом. С 1927 по 1930 гг. вышли пять номеров “Лусабаца”. Сборник состоял из литературного, живописного и музыкального разделов. Литературный раздел — самый большой по объему и единственный, представленный во всех номерах издания. Охваченные в разделе живописи художники в большинстве своем принадлежали к числу лучших армянских художников Тифлиса, среди которых были и члены “Айартуна”. В духе советской идеологии, нашедшие место на страницах сборника картины изображали рабочий класс, промышленный город, ликвидацию безграмотности и т. д. Художественно-литературный сборник “Лусабац” уместно рассматривать в контексте армянской культуры Тифлиса.

Ключевые слова: “Лусабац”, литературно-художественный сборник, тифлисский армянский художник, советская идеология.

PAINTING SECTION IN THE LITERARY-ARTISTIC COLLECTION "LUSABATS"

MANE MKRTCHYAN

In 1921, the literary and cultural public organization House of Armenian Art – "Hayartun" was established in Tiflis (Tbilisi). It existed quite actively until the 1930s. In 1926, the Literary Department of "Hayartun" and the Association of Proletarian Writers set up the Union of Armenian Writers, which initiated the "Lusabats" (“Dawn”) literary-artistic collection as a platform for the members of the Union and proletarian writers in general. From 1927 through 1930, five issues of "Lusabats" came out. The journal included three sections: literary, painting and

musical. The literary section was the largest and the only one presented in all the issues. In the painting section, the best Tiflis-based Armenian artists were presented, some of them – members of "Hayartun". Many of the paintings that appeared on the pages of the collection, in line with the Soviet ideology, depicted working class, industrial city, elimination of illiteracy, etc. The "Lusabats" artistic-literary collection is relevant to be considered in the context of the Armenian culture of Tiflis.

***Key words*:** "Lusabats", literary-artistic journal, Tiflis-based Armenian artists, Soviet ideology.